Հաստատված է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ի
Խորհրդի 10.06.2021թ. թիվ 35 որոշմամբ
(ուժի մեջ է 20.06.2021թ.-ից)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-03-01
Խմբագրություն՝ 01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կողմից իրականացվող Ընդհանուր պատասխանատվության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Պայմանների և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունն իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքում է Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

1.4. Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր), Շահառուի համար:

1.5. Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Պայմանների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **Ապահովագրող՝** «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.

2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ հիմնարկ.

2.3. **Ապահովադրի աշխատակից՝** անձ, որն Ապահովադրի հետ գտնվում է աշխատանքային կամ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ՝ համաձայն կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի.

2.4. **Պայմանագիր՝** ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.

2.5. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից հնարավոր բոլոր ապահովագրական հատուցումների իրականացման առավելագույն չափ.

2.6. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման համար վճարվելիք գումար.

2.7. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած իրադարձություն, որի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Շահառուին.

2.8. **Շահառու (Տուժող)՝** անձ, որին Ապահովագրական պատահարի հետևանքով հասցվել է վնաս.

2.9. **Ապահովագրության տարածք՝** Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով.

2.10. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական.

2.10.1. Պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը,

2.10.2. Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

2.11. **Ապահովադրի պատասխանատվության սահման՝** գումար, որը չի գերազանցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, և որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում.

2.12. **Վնասի հատուցման Շահառուի պահանջ՝** անմիջապես (անմիջականորեն) Ապահովադրին հասցեագրված գրավոր պահանջները (այդ թվում՝ պահանջագրի ձևով), ինչպես նաև դատարան ներկայացված հայցադիմումները վնասի պատճառման փաստի, չափերի և պատճառների վերաբերյալ հաստատված ապացույցներով: Շահառուն իրավունք չունի անմիջականորեն Ապահովագրողին ներկայացնելու վնասի հատուցման պահանջները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

2.13. **Ապահովագրվող գործունեություն՝** իրավական ակտերին չհակասող գործունեություն, որի իրականացման դեպքում կատարվում է Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի՝ ՀՀ օրենսդրությանը կամ այլ իրավական ակտերին չհակասող գույքային շահերը, որոնք կապված են Շահառուի կյանքին, առողջությանը, գույքին կամ ֆինանսական միջոցներին պատճառված նյութական վնասի հատուցման հետ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ՌԻՍԿԵՐ

4.1. Ապահովագրական պատահար են համարվում այն իրադարձությունները (բացառությամբ Բաժին 5-ում նշված դեպքերի), որոնց պատճառով երրորդ անձի (անձանց) կողմից պահանջ է ներկայացվել պատճառված վնասի հատուցման համար, պայմանով որ.

4.1.1. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադրին ներկայացվել են վնասը հատուցելու Շահառուի պահանջները, եթե Պայմանագրով պահանջների ներկայացման այլ ժամկետ նախատեսված չէ,

4.1.2. Վնասը պատճառվել է Պայմանագրի գործողության ընթացքում կամ եթե դա նախատեսված է Պայմանագրով՝ Պայմանագրի գործողության ավարտից հետո՝ Պայմանագրի կողմերի միջև համաձայնեցված որոշակի ժամանակահատվածի ընթացքում,

4.1.3. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը նախապես տեղյակ չէր ապահովագրական պատահարն առաջացրած հանգամանքների առկայության կամ դրանց առաջացման հավանական լինելու մասին,

4.1.4. Վնասը հասցվել է Ապահովագրության տարածքում,

4.1.5. Գոյություն ունի պատճառահետևանքային անմիջական կապ հատուցման ենթակա վնասի և պատահարի միջև,

4.1.6. Ապահովադրի (Շահառուի) քաղաքացիական պատասխանատվության ծագումը (առաջացումը) ընդունվել է վերջինիս կողմից կամավոր կերպով՝ Ապահովագրողի գրավոր համաձայնության առկայությամբ, կամ օրինական ուժ է ստացել դատարանի համապատասխան որոշմամբ,

4.1.7. պատահարն արդյունք է ոչ կանխամտածված անզգուշության (սխալի, բացթողման),

4.1.8. պատահարն արդյունք է ապահովագրված գործունեության ընթացքում օգտագործվող նյութերի, սարքավորումների, գործիքների անսարք և անորակ լինելու, նյութերին բնորոշ առանձնահատկությունների,

4.1.9. ռիսկի ծագումը արդյունք է Ապահովագրության տարածքում գործող, իրավական ակտերով նախատեսված այլ պատճառների:

4.2. Մեկ կամ մի քանի փոխկապակցված պատահարների հետևանքով մի քանի Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար:

4.3. Պայմանների համաձայն կարող է ապահովագրվել հետևյալ գործունեությունը՝

4.3.1. շենքերի, շինությունների, տարածքների, սարքավորումների, հողակտորների պահպանումը և շահագործումը,
4.3.2. շինություններին տիրապետումը,
4.3.3. տնտեսական գործունեությունը,
4.3.4. զանգվածային հասարակական միջոցառումների կազմակերպումը և անցկացումը (ցույցեր, քայլարշավներ և այլն),
4.3.5. մարզական, մշակութային և կրթական միջոցառումների անցկացումը (ավտոմրցույթներ, մրցույթների, ներկայացումների, համերգներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ և այլն),
4.3.6. տոնական հրավառությունների, իլյումինացիաների և այլնի կազմակերպումը,
4.3.7. ընտանի և այլ կենդանի պահելը (շներ, անասուններ, էկզոտիկ կենդանիներ և այլն),
4.3.8. աշխատանքային հարաբերություններում գործատուի գործունեությունը՝ ուղղված աշխատողների համար անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծմանը, նրանց իրավունքների պաշտպանությանը և այլն,
4.3.9. խնամակալների և հոգաբարձուների գործունեությունը,
4.3.10. շրջապատի համար բարձր վտանգավորությամբ գործունեությունը, որի իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով չի պարտադրվում հատուկ պայմաններով ապահովագրության իրականացում,
4.3.11. դեղորայքի կլինիկական հետազոտությունների կազմակերպումը, իրականացումը և անցկացումը,
4.3.12. գործունեության այլ տեսակները, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին:

ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉԻ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՉԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՎՆԱՍԸ, ՈՐԸ ՀԵՏԵՎԱՆՔ Է՝

5.1.1. փաստի, իրադրության, իրադարձության կամ պատահարի, որը մինչև Պայմանագրի կնքումը հայտնի է եղել Ապահովադրին, կամ Ապահովադիրը պետք է ակնկալեր, որ այն կարող էր հանգեցնել ապահովագրական պատահարի,
5.1.2. պատահարի առաջացմանն ուղղված Ապահովադրի, նրա աշխատակցի կամ Շահառուի կանխամտածված, դիտավորյալ կամ հանցավոր գործողության կամ անգործության, ՀՀ օրենսդրությանը, իրավական ակտի նորմի կամ նորմատիվային փաստաթղթի կոպիտ խախտման,
5.1.3. այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ Ապահովադիրն ի պաշտոնե իրականացնում է ղեկավարում (կառավարում), Ապահովադրին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցի ներկայացման,
5.1.4. վերահսկողության, որն ի պաշտոնե իրականացվում է Ապահովադրին վերահսկողի կամ ղեկավարողի կամ այն անձի կողմից, որի փայատեր է հանդիսանում Ապահովադիրը կամ որի հետ առկա է փոխկապակցվածություն (ազգակցական կամ ընտանեկան կապ),
5.1.5. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ կանխամտածված ձևով կեղծ և ապահովագրական ռիսկի գնահատման համար էական տեղեկատվության ներկայացման,
5.1.6. պատահարի առաջացման վերաբերյալ Պայմանագրով և (կամ) Պայմաններով սահմանված կարգով և ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին չտեղեկացման կամ ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթի չտրամադրման կամ պատահարի առաջացման պայմանների, բնույթի կամ վնասի չափի որոշման աշխատանքներում Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի գործողություններին խոչնդոտման,
5.1.7. Ապահովադրի (նրա աշխատակցի) գործունեության իրականացման թույլտվության կամ լիցենզիայի (ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված լինելու դեպքում) գործողության ժամկետի

լրանալուց կամ դադարեցումից հետո կամ կասեցված լինելու ընթացքում մասնագիտական գործունեություն իրականացնելիս թույլ տված սխալների կամ բացթողումների,

5.1.8. Ապահովադրի, նրա աշխատակցի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն,

5.1.9. Ապահովադրի (նրա աշխատակցի) գործունեության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով վերահսկողությունը չպահպանելու,

5.1.10. Ապահովադրի՝ համապատասխան գործունեության համար չլիազորված աշխատակցի գործողությունների,

5.1.11. Ապահովադրի (նրա աշխատակցի) կողմից օրենքների, գերատեսչական և արտադրական կանոնների, կանոնակարգերի, նորմերի և նորմատիվային փաստաթղթերի խախտման,

5.1.12. Ապահովադրի (նրա աշխատակցի) ալկոհոլի, թմրանյութերի կամ տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի ազդեցության տակ գտնվելու,

5.1.13. Ապահովադրի (նրա աշխատակցի) մոտ տնօրինման, տիրապետման, օգտագործման հիմունքներով կամ այլ՝ օրենքով կամ այլ պայմանագրային հիմքով գտնվող գույքի ոչնչացման (վնասման) արդյունքում,

5.1.14. պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ այդ մարմինների պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների (անգործության),

5.1.15. ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտերի կամ Պայմանագրի համաձայն ապահովագրական հատուցումը բացառող հանգամանքների:

5.2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉԻ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՉԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՆԱԵ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՎՆԱՍԸ, ՈՐԸ ՀԵՏԵՎԱՆՔ Է՝

5.2.1. ասբեստի և ասբեստ պարունակող ցանկացած արտադրանքի ազդեցության (ասբեստոզ),

5.2.2. բժշկական անփութության,

5.2.3. ցանկացած տեսակի ախտոտման,

5.2.4. մասնագիտական հիվանդությունների,

5.2.5. թափոնների հեռացման և կուտակումների,

5.2.6. էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության,

5.2.7. արժեզրկման:

5.3. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ՉԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ և ՉԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ՝

5.3.1. ցանկացած պատերազմի կամ ռազմական գործողության (անկախ այն բանից դրանք եղել են հայտարարված, թե ոչ) և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, զինված ուժերի կամ ահաբեկիչների գործողության, ժողովրդական հուզումների հետևանքով պատճառված վնասները,

5.3.2. ռադիոակտիվ կամ այլ իոնային ճառագայթման ազդեցության հետևանքով, այդ թվում ռադիոակտիվ ալֆա, բետտա, գամմա նյութերի, նեյտրոնների արտազատման, օպտիկական (լազերային), միկրոալիքային կամ քվանտային գեներատորների արագացուցիչների թունավորված մասնիկներից արտազատվող ճառագայթման հետևանքով առաջացած վնասները,

5.3.3. վնասը, որը պատճառվել է Ապահովադրի կողմից օրենքի, այլ իրավական ակտերի, արտադրական Պայմանների, նորմերի կամ նորմատիվային փաստաթղթերի դրույթների չկատարման հետևանքով,

5.3.4. մարդկանց, կենդանիների կամ բույսերի օրգանիզմում գենետիկ փոփոխությունների հետևանքով պատճառված վնասը,

5.3.5. պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված վնասը,

5.3.6. Ապահովադրի կողմից բարձր վտանգավորության աղբյուրների շահագործման կամ դրանք այլ նպատակներով օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

5.3.7. Ապահովադրի կողմից Շահառուին ՁԻԱՀ-ով վարակման հետևանքով պատճառված վնասը,

5.3.8. Ապահովադրի կողմից ապահովագրված գործունեություն իրականացնելու ընթացքում իրեն հայտնի դարձած առևտրային գաղտնիքի կամ այլ գաղտնի տեղեկատվության հրապարակելու կամ անձնական նպատակներով օգտագործելու (Ապահովադրի աշխատակիցների անձնական նպատակներով օգտագործելու) հետևանքով պատճառված վնասը,

5.3.9. հեղինակային իրավունքների կամ այլ մտավոր սեփականության օբյեկտների բացառիկ իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասը,

5.3.10. կոնստրուկցիաների, սարքավորումների կամ նյութերի շահագործման նորմատիվային ժամկետներից ավել օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

5.3.11. Ապահովադրի կողմից պատրաստվող (իրացվող, կատարվող կամ մատուցվող) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անորակ լինելու, ինչպես նաև այդ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) օգտագործման վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ բավարար տեղեկատվության առկայության հետևանքով պատճառված վնասը,

5.3.12. Շահառուին պատճառված վնասը, որը հետևանք է մշտական, պարբերաբար, կամ երկարատև ջերմային ազդեցության կամ գազերի, գոլորշիների, ճառագայթների, խոնավության կամ ցանկացած, այդ թվում մթնոլորտում, առկա մասնիկների (ծուխ, փոշի և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ազդեցությունը հանկարծակի է կամ չկանխատեսված և կան ակնհայտ ապացույցներ, որ այդ ազդեցության հետևանքով վնասը անխուսափելի էր:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ

6.1. Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ:

6.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

6.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում, ապա ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման չափով:

6.4. Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին ապահովագրական գումարի չափը մեծացնելու պահանջով՝ վճարելով համապատասխան չափով Ապահովագրավճար, որն իրականացվում է լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

6.5. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրում կարող են սահմանվել մեկ ապահովագրական պատահարի, ռիսկերի առանձին խմբերի և այլնի գծով պատասխանատվության սահմաններ: Այդպիսիք չլինելու դեպքում Պայմանագրում նշված Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր սահմանը (լիմիտը) համարվում է բոլոր ռիսկերի և մեկ ապահովագրական պատահարի համար միասնական սահման:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար՝ ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից և մեծությունից, գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

7.2. Ապահովադիրն ապահովագրավճարը կարող է վճարելմիանվագ կամ մաս-մաս, կանխիկ կամ փոխանցումով: Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

7.3. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

7.4. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար

սահմանված ժամկետից 5 (հինգ) օր (հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

7.5. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև ապահովագրավճարի (այդ թվում՝ հերթական) վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցումը վճարելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

7.6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՑ, եթե Ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին Ապահովադիրն Ապահովագրավճարի գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ

8.1. Պայմանագիրն Կողմերի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտին, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին կարող է նյութական վնաս պատճառվել:

8.3. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

8.4. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.

8.4.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները,

8.4.2. Ապահովադրի թույլտվության, լիցենզիայի և կամ մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքի այլ փաստաթուղթ (ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված լինելու դեպքում),

8.4.3. այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման համար:

8.5. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին տեղեկացնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

8.6. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.7. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով:

8.8. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),

9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի միջոցով,

9.1.3. Պայմանագրի համաձայն ստանալ ապահովագրական հատուցում,

9.1.4. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը.

9.1.5. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

9.2. ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

9.2.1. Պայմանագիրը կնքելիս ինչպես նաև դրա գործողության ընթացքում Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի աստիճանը որոշող հավաստի և ճշգրիտ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

9.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում անհապաղ (իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ գրավոր) տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի

կնքման պահին իր կողմից Ապահովագրողին ներկայացված հանգամանքների վերաբերյալ կատարված փոփոխությունների մասին,

9.2.3. Պայմանագրում նշված կարգով և ժամկետում վճարել ապահովագրավճարը (կամ դրա մի մասը),

9.2.4. Պայմաններով սահմանված կարգով Ապահովագրողին հայտնել պատահարի վերաբերյալ,

9.2.5. Ապահովագրողին հայտնել ապահովագրական օբյեկտի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի մասին,

9.2.6. երրորդ անձանց կողմից վնասի հատուցման վերաբերյալ պահանջի ներկայացման (պատահարի առաջացման) դեպքում այդ մասին հայտնի Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

9.2.7. պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ,

9.2.8. Ապահովագրողին ներկայացնել պատահարի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան պարզել պատահարի առաջացման պատճառներն ու վնասի չափը,

9.2.9. առանց Ապահովագրողի համաձայնության երրորդ անձին չվճարել կամ չտալ վնասի հատուցման վերաբերյալ որևէ ուղղակի կամ անուղղակի պարտավորության իրականացման երաշխիքներ,

9.2.10. պատճառված վնասի չափի որոշման ժամանակ ապահովել Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի պարտադիր մասնակցությունը,

9.2.11. կատարել ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

9.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

9.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տվյալների իսկությունը և Ապահովադրի կողմից ռիսկի աստիճանի գնահատման կամ վնասի չափի որոշման վրա ազդող կանխամտածված սխալ տեղեկություններ ներկայացնելու փաստը, ապացուցելու դեպքում վաղաժամկետ դադարեցնել Պայմանագրի գործողությունը,

9.3.2. ինքնուրույն պարզել, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրել անկախ մասնագետի (փորձագետի)՝ ռիսկի աստիճանը կամ պատճառված վնասի հանգամանքները և (կամ) չափը որոշելու համար,

9.3.3. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի միջոցով,

9.3.4. հարցում կատարել համապատասխան լիազոր (իրավասու) մարմիններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկությունները ստանալու նպատակով,

9.3.5. ավելացնել ապահովագրավճարի չափը կամ դադարեցնել Պայմանագիրը, կամ էլ Ապահովադրից պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխում, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի մեծացում,

9.3.6. Ապահովագրական հատուցման գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված ապահովագրավճարի գումարի հետ (Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում),

9.3.7. ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտերի, Պայմաններին Պայմանագրի համաձայն մերժել ապահովագրական հատուցման վճարումը,

9.3.8. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,

9.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

9.4.1. Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին և Պայմանագրին,

9.4.2. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում ապահովագրական հատուցում վճարել Ապահովադրին,

9.4.3. Ապահովագրական գումարի և պատճառված վնասի մեծության սահմաններում հատուցել Ապահովադրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են ապահովագրական պատահարի ընթացքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով կամ Ապահովագրողի ցուցումներին համապատասխան,

9.4.4. կատարել ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Պայմանագրով իրեն

վերապահված այլ պարտականություններ:

9.5. Ապահովագրողը, Ապահովադիրը և Շահառուն պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

10.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ (ՇԱՀԱՌՈՒՆ) ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅԴ ՄԱՍԻՆ ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ ՀԱՅՏՆԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ, իսկ ՊԱՏԱՀԱՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 2 (ԵՐԿՈՒ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ: Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել պատահարի մասին սույն կետում նշված կարգով և ժամկետում, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ:

10.2. Ապահովադիրը պարտավորվում է իր կողմից կամ իր անունից չընդունել, չառաջարկել, չխոստանալ կամ չվճարել որևէ հատուցման պահանջ՝ առանց Ապահովագրողի կողմից գրավոր համաձայնության, հակառակ դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ:

ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից ՀՀ օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, Պայմաններին և Պայմանագրին համապատասխան՝ հիմք ընդունելով Ապահովադրի (Շահառուի) գրավոր դիմումը, ինչպես նաև պատճառված վնասի առաջացման հանգամանքները և (կամ) չափը հավաստող՝ համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) կողմից հաստատված փաստաթուղթը (փաստաթղթերը):

11.2. Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ և (ԿԱՄ) ՇԱՀԱՌՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

11.2.1. ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ Ապահովագրողի սահմանած ձևի դիմում,

11.2.2. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),

11.2.3. պատահարի առաջացման պատճառը և հանգամանքները հավաստող փաստաթղթեր,

11.2.4. Ապահովադրի (Շահառուի) իրավաբանական անձի լինելու դեպքում՝ նրա կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները, անհատ ձեռներեց լինելու դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը,

11.2.5. պետական մարմինների կողմից սահմանված կարգով տրված Ապահովադրի համապատասխան գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը (թույլտվություն, լիցենզիա),

11.2.6. պատճառված վնասի հանգամանքներին, պատճառներին և չափերին վերաբերող փաստաթղթերը կամ դրանց պատճենները (վնասված գույքի հետազոտման ակտեր, հաշիվ ապրանքագրեր, գնման պահանջագրեր, կտրոններ, անդորրագրեր, փորձագիտական եզրակացություններ և այլն), այդ թվում՝ համապատասխան իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերը,

11.2.7. հրդեհի դեպքում՝ հրշեջ ծառայության կողմից տրված եզրակացությունը,

11.2.8. պայթյունի, փլուզման կամ այլ վթարների դեպքում՝ համապատասխան վթարային ծառայության կողմից տրված ակտը,

11.2.9. քրեական գործի հարուցման կամ հարուցման մերժման վճռի մասին գրավոր հաղորդագրությունը (փաստաթուղթը) կամ դրա պատճենը, այն բոլոր դեպքերում, երբ վնասի առաջացման պատճառների հանգամանքների քննությանը մասնակցում են ոստիկանությունը, դատախազությունը և այլ իրավապահ մարմինները,

11.2.10. դատարանի որոշումը, դատական մարմինների ակտերը (գործը դատարանում քննվելու դեպքում) կամ դրանց պատճենները,

11.2.11. բժշկական հաստատությունների կողմից տրված և գլխավոր բժշկի (տնօրենի) կողմից ստորագրված փաստաթղթերը կամ բժշկական փորձաքննության մարմնի եզրակացությունը (ֆիզիկական անձի առողջությանը պատճառված վնասի դեպքում),

11.2.12. մահվան վկայականի և ժառանգության իրավունքները հավաստող փաստաթղթերի պատճենները (Շահառու հանդիսացող ֆիզիկական անձի մահվան դեպքում),

11.2.13. քաղաքացիական անձնագրի (զինվորականների համար անձը հաստատող փաստաթղթի) պատճենը, եթե Ապահովադիրը (Շահառուն) հանդիսանում է ֆիզիկական անձ,

11.2.14. Շահառուին պատճառված վնասի Ապահովադրի կողմից հատուցման ծախսերը հաստատող փաստաթղթերը:

11.3. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել վերը նշված փաստաթղթերի ցանկը կամ Ապահովադրից պահանջել լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Ապահովագրական պատահարի կարգավորման համար:

11.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ապահովագրական հատուցում ստանալու համար բոլոր փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում, հակառակ դեպքում Ապահովագրողը Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:

11.5. Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են Պայմանների 11.4 կետով սահմանված դրույթների հետ:

11.6. Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից, կազմակերպություններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

11.7. Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, և ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա, ինչպես նաև անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:

11.8. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե՝

11.9.1. նշանակված է լրացուցիչ փորձաքննություն ապահովագրական դեպքի հետևանքով առաջացած վնասի մեծության որոշման նպատակով,

11.9.2. ապահովագրական պատահարի փաստի առիթով հարուցված է քրեական գործ,

11.9.3. Ապահովադրի կամ Շահառուի ապահովագրական հատուցման ստացման իրավասությունների վերաբերյալ կան հիմնավոր կասկածներ,

11.9.4. Պայմաններով հատուցման վճարմանը խանգարող այլ իրավիճակների առկայության դեպքում,

11.9.5. ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

11.9. Մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների հետևանքով տրվող ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը:

11.10. Եթե ապահովագրական պատահարի հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերից բխի, որ Ապահովադրի և տուժած անձի մեղավորությունը երկկողմանի համահավասար է, ապա Ապահովագրողն իրավունք ունի տուժած անձին վճարել ապահովագրական հատուցում՝ կախված ապահովագրական պատահարում նրա ունեցած մեղքի աստիճանից: Այդ մեղքի աստիճանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա և Պայմանագրի կողմերի համաձայնությամբ, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

11.11. Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

11.12. Ապահովագրողն ապահովագրական պատահարին առնչվող և Պայմաններով նախատեսված ԲՈԼՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ 5 (ՀԻՆԳ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ:

11.13. Ապահովագրողը, Ապահովադրի (Շահառուի) պահանջով, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԿԱՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԴՐԻՆ (ՇԱՀԱՌՈՒԻՆ):

11.14. Ապահովագրողը, Ապահովադրի (Շահառուի) պահանջով, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԿԱՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԴՐԻՆ (ՇԱՀԱՌՈՒԻՆ):

11.15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ, ՈՐԸ ՀՆԳՕՐՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՊԱՏՎԻՐՎԱԾ ՆԱՄԱԿՈՎ ԱՌԱՔՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԴՐԻՆ (ՇԱՀԱՌՈՒԻՆ)՝ ՆՐԱ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ:

11.16. Ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ 5 (ՀԻՆԳ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄԻԱՆՎԱԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ,, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ

12.1. Պայմանագրի գործողությունը դադարում է Պայմանագրի ժամկետը լրանալու պահից:

12.2. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում.

12.2.1. Ապահովադրի, եթե նա իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան,

12.2.2. Պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու,

12.2.3. եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,

12.2.4. Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու,

12.2.5. ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

12.3. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

12.4. Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում՝ Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը: Այս դեպքում Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 70

(յոթանասուն) տոկոսը՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 70 (յոթանասուն) տոկոս/Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

12.5. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

12.6. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին է վերադարձվում ապահովագրավճարը ամբողջությամբ՝ բացառությամբ Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված դեպքի:

12.7. Ապահովադրի կողմից ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Ապահովագրողը վաղաժամկետ լուծում է Պայմանագիրը և Ապահովադրին վերադարձնում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 50 (հիսուն) տոկոսը՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 50 (հիսուն) տոկոս / Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

12.8. Ապահովագրողի լուծարման դեպքում, Ապահովադրին է վերադարձվում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը:

12.9. Ապահովադրի կողմից ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Ապահովագրողը վաղաժամկետ լուծում է Պայմանագիրը և Ապահովադրին վերադարձնում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 50 (հիսուն) տոկոսը՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 50 (հիսուն) տոկոս / Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

12.10. Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

ԲԱԺԻՆ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄԸ

13.1. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կողմից 11.2. կետով սահմանված փաստաթղթերի և պատճառված վնասի չափերը հայտնի լինելու դեպքում:

13.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչման դեպքում Ապահովագրողը Պայմանների համաձայն իրականացնում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով Շահառուին հասցված վնասի չափով, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը, իսկ Պայմանագրով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի (ռիսկի) համար առավելագույն պատասխանատվության չափ սահմանված լինելու դեպքում՝ այդ սահմանված չափը:

13.3. Պայմաններում վնաս ասելով պետք է հասկանալ՝

13.3.1. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետ կապված Շահառուի կրած ծախսերը, որոնք վճարվում են համաձայն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված չափերի: Դրանք են՝

- աշխատավարձը, որից ֆիզիկական անձ հանդիսացող Շահառուն զրկվել է աշխատունակության կորստի կամ դրա նվազման պատճառով,հաշմանդամության կամ առողջությանը պատճառված այլ վնասի հետևանքով - առողջության վերականգման համար լրացուցիչ ծախսերը (բուժման ծախսեր, լրացուցիչ սնունդ, դեղորայքի ձեռքբերում, պրոթեզավորում, կողմնակի խնամք, սանիտարա-կուրորտային բուժում, հատուկ տրանսպորտային միջոցներ, սայլակների ձեռքբերում,

եթե սահմանված է, որ տուժողը թվարկված օգնությունների և խնամքի կարիքն ունի և չունի դրանց անվճար ստացման իրավունք),

- հարկադրաբար մասնագիտությունը փոխելու համար անհրաժեշտ վերառրակավորման ծախսերը,
- աշխատավարձի մասը, որից ֆիզիկական անձ հանդիսացող Շահառուի մահվան դեպքում զրկվել են նրա խնամակալության տակ գտնվող կամ նրանից նյութական միջոցներ ստանալու իրավունքներ ունեցող անաշխատունակ անձինք,
- հուղարկավորության ծախսերը:

13.3.2. Ծախսերը, որոնք առաջացել են գույքային վնասի պատճառման հետևանքով Այդ ծախսերը որոշվում են գույքի վնասման կամ ոչնչացման արդյունքում առաջացած իրական չափով, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգմանն ուղղված ծախսերով, մասնավորապես՝

- գույքի լրիվ ոչնչացման դեպքում իրական վնասը հավասար է ոչնչացված գույքի իրական արժեքին՝ հանած մաշվածությունը և օգտգործման ենթակա մնացորդների արժեքը,
- գույքի մասնակի վնասվելու դեպքում իրական վնասը որոշվում է ծախսերի այն չափով, որոնք անհրաժեշտ են վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վիճակը բերելու համար:

13.4. Վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վիճակին բերելու անհնարինության դեպքում, իրական վնասը որոշվում է այն գումարով, որի չափով նվազել է գույքի իրական արժեքն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով:

13.5. Եթե գույքի մասնակի վնասման դեպքում վերջինիս վերականգման ծախսերը մեծ լինեն գույքի իրական արժեքից, ապա որպես ապահովագրական հատուցման չափ կընդունվի տվյալ գույքի իրական արժեքը:

13.6. Պայմաններում խախտված իրավունքների վերականգմանն ուղղված ծախսեր ասելով հասկանում ենք Շահառուի կողմից հետևյալ ծառայությունների համար վճարված ծախսերը՝

- մասնագիտացված, սերվիսային, վերանորոգման կազմակերպություններին (ծառայություններին)՝ վնասված գույքը քանդելու, վերանորոգելու, հավաքելու, կորցրածի փոխարեն նոր գույք առաքելու համար,
- կենցաղային սպասարկման ձեռնարկության, քիմմաքրման, լվացքատան ծառայությունների դիմաց,
- փրկարար ծառայությանը, եթե տեղի ունեցած հանգամանքներով նրանց կանչը արդարացված է,
- վարձույթային կազմակերպություններին, որոնք գույքի վերանորոգման ժամանակահատվածում տրամադրել են վնասված գույքին փոխարինող գույք, և եթե այդ գույքի բացակայությունը կփոխեր Շահառուի կյանքի առօրյա բնույթը կամ կհանգեցներ լրացուցիչ վնասների,
- այլ ծառայությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների, եթե դրանց մասնակցությունը վնասների կարգավորման հարցում Ապահովագրողի կողմից ճանաչվում է հիմնավորված և նպատակային:

13.7. Հայցերի (դիմումների) մինչդատական կարգով կարգավորման դեպքում պատճառված վնասի չափը Ապահովագրողի կողմից որոշվում է ապահովագրական պատահարի փաստը, հանգամանքները, ապահովագրական պատահարի հետևանքով վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա: Հայցերի (դիմումների) մինչդա¬տական կարգով կարգավորման դեպքում ապահովագրական հատուցում իրականացնելու համար բավարար հիմքերի բացակայությամբ պայմանավորված Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշումն ընդունում է դատական մարմինների որոշման հիման վրա:

13.8. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

13.8.1. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման նպատակով Ապահովադրի կողմից կատարած ծախսերը, եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումների համաձայն,

13.8.2. ապահովագրական պատահարի գործը դատական մարմիններում վարելու համար Ապահովադրի կատարած ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումներին համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ,

13.8.3. Ապահովագրական պատահարի հետ կապված պատճառների և հանգամանքների պարզաբանման նպատակով Ապահովադրի կողմից կատարված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ:

13.9. Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է Ապահովադրին, եթե վերջինս Ապահովագրողի հետ գրավոր համաձայնությամբ հատուցել է Շահառուին պատճառած վնասը: Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադրին միանվագ կարող է կատարվել նաև եթե ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Ապահովադիրը պարտավոր է պատճառված վնասի համար վճարել հատուցում ամսեկան կամ այլ պարբերական մուծումներով:

13.10. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվությունը երրորդ անձանց նկատմամբ ապահովագրված է նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում՝ կիրառելով համամասնական հաշվարկի մեթոդը:

13.11. Պայմանների համաձայն հատուցման ենթակա չեն Ապահովադրի կողմից վճարման ենթակա տույժերը, տուգանքները, այլ պատժամիջոցները:

13.12. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա հատուցման ենթակա չեն՝

13.12.1. չստացված շահույթը (եկամուտը), որը Շահառուն կարող էր ստանալ քաղաքացիական շրջանառության պայմաններում, եթե նրա իրավունքները խախտված չլինեին (բաց թողնված շահույթ),

13.12.2. քաղաքացուն պատճառված բարոյական վնասը կամ իրավաբանական անձի գործարար համբավին պատճառված վնասը:

13.13. Եթե Շահառուին պատճառված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովադրի կողմից, այլ նաև վնասի պատճառման համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում պատճառված վնասի և այն գումարի տարբերության չափը, որը պատճառված վնասի համար պատասխանատու անձանցից ենթակա է առգրավման (գանձման):

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանն համաձայն:

14.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: